

# ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՅՐԱԶԴԱՆԻ N 14 ՅԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

16.05.2014

Մեկնարկել են ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Չարությունյանի այցելությունները մարզի հանրակրթական դպրոցներ: Կոտայքի մարզպետն աշխատանքային այցով եղել է Յրազդանի N 14 հիմնական դպրոցում, շրջել դպրոցի մասնաշենքի տարածքում, զրուցել մանկավարժների և աշակերտների հետ՝ տեղում ծանոթանալով կրթական գործընթացների կազմակերպման հիմնական ուղղություններին, կրթական բարեփոխումների կիրառման միտումներին ու շենքային պայմաններին:

Այնուհետև Կոտայքի մարզպետ Ա. Չարությունյանը հանդիպում է ունեցել կրօջախի բոլոր աշխատակիցների հետ, քննարկել ուսումնական տարվա ավարտին վերաբերող կազմակերպական բնույթի մի շարք հարցեր՝ այդ ուղղությամբ տալով համապատասխան հանձնարարականներ:

Յրազդանի N 14 հիմնական դպրոցի տնօրեն Ա. Բավեյանը Կոտայքի մարզպետին զեկուցել է դպրոցում կազմակերպվող ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքի վերաբերյալ, ինչպես նաև ներկայացրել ուսումնական տարվա ավարտին վերաբերող ընթացակարգային գործողությունների շրջանակը:

Կոտայքի մարզպետի հետ ունեցած հանդիպմանը մաս են կազմել նաև դպրոցի շենքի հիմնանորոգման ուղղությամբ նախատեսվող աշխատանքների ու առաջնահերթությունների քննարկումները: